# ԱՊՈԼԻՆԱՐԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***Հովհաննես Հովհաննիսյան***

Անտիոքյան աստվածաբանական դպրոցի հայտնի ներկայացուցիչ Ապոլինար Լաոդիկեցու քրիստոսաբանական ուսմունքը պատմությանը հայտնի է ապոլինարականություն անվամբ: Այն արդարացիորեն համարվում է ոչ միայն IV դ., այլև՝ ընդհանրական եկեղեցու համակարգում գործող ամենաազդեցիկ ու ամենավտանգավոր հերետիկոսություններից մեկը, որը հաղթահարելու համար ուղղադավանությունից չափազանց մեծ ջանքեր պահանջվեցին: Այդ գործընթացների պատմական ընթացքի տրամաբանությունն ու օրինաչափությունները վեր հանելու համար ամենից առաջ հարկ է անդրադառնալ Ապոլինարիոս Լաոդիկեցու քրիստոսաբանական համակարգի ծնունդի, էության և էվոլյուցիայի հարցերին:

Ապոլինարի գաղափարական զարգացումը գերմանացի աստվածաբան Ա. Հառնակը ներկայացնում է երկու փուլով: Համաձայն նրա վաղ փուլում (IV դարի 50-60-ական թվականներ) Ապոլինարը մերժել է Քրիստոսի երկվության (երկու բնությունների) վարդապետությունը: Արիստոտելի գաղափարական ազդեցությամբ նա պնդել է, որ «երկու կատարյալներ չեն կարող միասնություն կազմել» ու հանգել այն հետևության, որ Աստված Բանը «հեղվել է Մարիամի ծնած մարմնի վրա», հետևաբար եղել է «մարմնի հագուստը»[1]: Այս փուլում նա մարդուն պատկերացրել է երկմասնյա, այսինքն, որ վերջինս կազմված է միայն մարմնից ու հոգուց: Հետևաբար, Ապոլինարը հանգել է այն հետևությանը, որ Քրիստոս չէր կարող «երկու հոգի ունենալ» և ինչպես որ մարդն ունի մեկ հոգի և մեկ մարմին, այնպես էլ անձնավորված Քրիստոսը կազմված է աստվածային և մարդկային բնության մեկական տարրից՝ հոգուց և մարմնից: Ըստ Ապոլինարի Բանը կամային և ակտիվ սկիզբ է, իսկ մարմինը՝ պասիվ, և «հատկանիշների փոխանակմամբ» աստվածայինը մարդկային տարրեր է ընդունել, իսկ մարմինը՝ աստվածային: Արդյունքում ստացվել է Քրիս-

---

[1] Տե՛ս **Гарнак А.,** История догматов. Ч. II, Развитие церковной догмы, СПб., 1911, с. 299:

տոսի մեկ բնություն և իրական փրկագործության հնարավորություն[1]:

Գաղափարական զարգացման երկրորդ փուլում, համաձայն Ա. Հառնակի, Ապոլինարն իր քրիստոսաբանական եզրահանգումների համար օգտագործել է մարդու եռամաս կառուցվածքի (մարմին, հոգի, ոգի) մասին պլատոնական ուսմունքը: Անձնավորման վարդապետության զարգացման շրջանակներում Ապոլինարը հաստատապես պնդում է, որ միայն իրապես Անձնավորված Աստված կարող էր նպաստել մեղքերի քավությանը: Դիխոտոմիկ ու տրիխոտոմիկ իր տեսակետների վերլուծության շրջանակներում նա քննարկում է Աստված Բանի իրական միավորումը մարդկային եռամաս կառուցվածքի հետ: Ապոլինարը հանգել է այն հետևության, որ սկզբունքորեն անհնար է մեկ անձի մեջ միավորել որակապես տարբերվող երկու Լոգոսներ (Բանը և մարդկային միտք-ոգին), որ «երկու Լոգոսներին սուբստանցիոնալ հատկանիշ վերագրելով» անխուսափելի կդառնա նաև երկու կամքի, երկու ներգործության, հետևաբար նաև «երկու Քրիստոսի» առկայությունը: Այդ սկզբունքներից ելնելով էլ Ապոլինարը մերժելի է համարել երկու Որդու, այսինքն Հիսուսի և Քրիստոսի, Աստծու և մարդու տարանջատումը ( «երկու բնություն՝ երկու Որդի»)[2], քանի որ նա համոզված է եղել, որ անհնար է Հիսուս Քրիստոսին պատկերացնել մեկ միասնական բնությամբ և երկու՝ աստվածային և մարդկային մտքով: Նա վստահ է այն բանում, որ սուբստանցիոնալ երկու սկիզբները՝ Լոգոսը և մարդը, չեն կարող միավորվել կատարյալ մեկ անձի մեջ: Լոգոսի բնությունը Կենսատու է և Կենդանի, նա է միակ ենթական և իրական միակ անձը: Քրիստոսը երկնային Ադամն է, որը միայն պոտենցիալ կերպով է մարդկային մարմին ընդունել: Ապոլինարը նաև պնդել է, որ մարդկային բնությունն ինքնին պասիվ լինելով՝ չէր կարող կատարելապես միավորվել Աստված Բանի հետ, որ Աստված Բանի մարմինը համագոյ է միայն աստվածային բնությանը[3]: Ապոլինարի հանրագումարային տեսակետն այս հարցում կայանում էր նրանում, որ ըստ նրա մեկ բնության մեջ երկու մտքերի առկայությունն օրինաչափորեն կխարխլի Աստված Բանի բնությունների «իրական միասնությունը»:

Լինելով նիկեական Հանգանակի համագոյության սկզբունքի ջերմ

---

[1] Տե՛ս **նույն տեղում**, էջ 299; **Эриксон М.** Христианское богословие, СПб., 2004, с. 609.

[2] Տե՛ս **Гарнак А.** История догматов. Ч. II, Развитие церковной догмы, с. 299-300.

[3] Տե՛ս там же, с. 300.

պաշտպաններից մեկը՝ Ապոլինարիոս Լաոդիկեցին ակտիվ պայքար է ծավալել արիոսականության դեմ[1]: Նա պնդում էր, որ Որդի Աստվածը Հոր էությունից է և Ս. Երրորդությունը համարում էր մեկ էություն: Նրա վարդապետական տեսության համաձայն, Ս. Երրորդության անձերը թեև տարբեր դեմքեր են, բայց նրանք համագոյ են և նույնն են էությամբ: Լինելով համագոյության ջերմ պաշտպաններից մեկը՝ նա շեշտում էր նաև, որ Հայր և Որդի մի են բնությամբ:

Հաշվի առնելով Ապոլինարիոսի հակաարիոսական այդ դիրքորոշումը՝ Աթանաս Մեծը և նիկեականները նախապես բարեհաճորեն էին տրամադրված նրա նկատմամբ: Սակայն, երբ Ապոլինարիոսը հրապարակավ հանդես եկավ Հիսուս Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների վերաբերյալ ուրույն ուսմունքով, նրա և ս. Աթանասի միջև տարաձայնություններ առաջ եկան, որը մեծ վիճաբանությունների տեղիք տվեց: Կարճ ժամանակ անց վիճաբանական այդ հարցերը դուրս եկան նեղ շրջանակներից և մեծ անհանգստություն պատճառեցին քրիս-

---

[1] Այդ մասին տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Т. 2, М., 1994, с. 139-141; **Карташев А. В.,** Вселенские Соборы, М., 1992, с.188-189; Philip Schaff, History of the Christian Church, v. 3, Massachusetts, 1996, p. 711-712. Քրիստոնեական մատենագրությունը և նրա հետևությամբ եկեղեցաբանական ու աստվածաբանական գրականությունը համահունչ կերպով պնդում են, որ դասական և աստվածաբանական փայլուն կրթություն ունեցող Ապոլինարը եղել է դարաշրջանի այն բացառիկ հոգևոր գործիչներից մեկը, որն աչքի է ընկել ճգնակեցության հակումով, դիմադարձ է կանգնել Հուլիանոս Ուրացողի քրիստոնեահալած կրոնական քաղաքականությանը և դարձել է նիկեականության ջերմեռանդ պաշտպան: Այդ դիրքերից նա բացահայտորեն պայքարել է ոչ միայն արիոսականության, այլև Մարկելոս Անկյուրիացու կողմից վերածնած սաբելականության, ինչպես նաև Եվնոմիոս Կիզիկիացու և հոգեմարտության դեմ: Հիշատակություններ են պահպանվել նաև այն մասին, որ նա քաջահմուտ է եղել հատկապես մեկնաբանական ոլորտում, որի շնորհիվ բազմաթիվ հետնորդներ և աջակիցներ է ձեռք բերել: Այդ մասին մանրամասները տե՛ս **Сократ Схоластик.** Церковная история, СПб., 1852, кн. III, гл. 16, с. 150-152: Հմմտ.՝ **Созомен Эрмий Саламинский.** Церковная История, СПб., 1851, кн. V, гл. 18, с. 355-357, кн. VI, гл. 22, с. 420, кн. VI, гл. 25, с. 427-430; Сокращение Церковной истории Филосторгия (сделанная Патриархом Фотием). СПб., 1854 / Дополнения к истории, с. 429-430; **Epiphanii S. P. N.** Adversus Octoginta haereses / **Migne J.-P**. Patrologiae cursus completus. **Series Graeca**. T. XLII, Lib. II, T. II (haer. LXXVII: Contra Hieracitas). Parisis, 1864, col. 641-643, 669, 676, 696-697:

տոնական ուղղադավան եկեղեցուն: Առավել ևս, որ խոսքը վերաբերում է աստվածաբանի կողմից առաջադրված Բան-մարդ փոխհարաբերության լուծումներին, մասնավորապես՝ Քրիստոսի անձնավորման վարդապետությանը: Այդ համատեքստում նախ հարկ ենք համարում անդրադառնալ այն տեսակետի քննական արժևորմանը, համաձայն որի Ապոլինարի քրիստոսաբանական վարդապետությունն ուղղված է եղել եկեղեցական ուսմունքի դեմ: Վերլուծաբաններից ոմանք առաջադրել և փորձել են հիմնավորել այն տեսակետը, թե լինելով անտիոքյան ավանդության կրողը, անձնավորման և Քրիստոսի բնութենական միասնության ուսմունքն առաջադրելիս՝ Ապոլինարը կանխավ հակվել է «միաբնակության» և փորձել արատավոր այդ ուսմունքն արմատավորել եկեղեցական պրակտիկայում[1]:

Ապոլինարիոսի քրիստոսաբանական եզրահանգումների ելակետը դասական փիլիսոփայությունն էր, մասնավորապես՝ մարդու եռադեմ՝ տրիխոտոմ՝ ոգի, հոգի, մարմին, կառուցվածքի մասին պլատոնական ուսմունքը: Ապոլինարիոսի ուսմունքի անկյունաքարը Բանի (Լոգոսի) անձնավորման հարցն էր, այսինքն՝ այն, թե ինչպես է տեղի ունենում Աստվածային Բանի միավորումը մարդու մարմնի հետ: Ապոլինարն իր քրիստոսաբանությունը կառուցել է Հովհ. 1: 14-ի նեղ ըմբռնման վրա (Եւ Բանը մարմին եղաւ, այսինքն՝ անձնավորմանը մասնակից է եղել մարդկային բնության միայն մեկ բաղադրիչը՝ մարմինը)[2]: Նա գտնում էր, որ իրական քավության համար պետք է ճշմարիտ Աստվածը անձնավորվեր իրապես: Բայց, քանի որ անձնավորման ժամանակ Հիսուս Քրիստոսի մեջ առկա են աստվածային և մարդկային երեք հատկություններ՝ ոգի, հոգի և մարմին, ապա, ըստ Ապոլինարիոսի, Աստվածայինի իրական անձնավորումը անհնարին է դառնում, քանի որ՝

Անձնավորումը իրենից ներկայացնում է բավականին բարդ գործընթաց: Անհնարին է Հիսուս Քրիստոսին պատկերացնել մեկ դեմքով և եր-

---

[1] Այդ մոտեցման մանրամասները տե՛ս **Lietzmann H**. Apollinaris von Laodicea und seine Schule: Texte und Untersuchungen, Cambridge, 1914, p. 58, 116; **Bethune-Baker J. F.** An Introduction to the Early History of Christian Doctrine, London, 1903, p. 96, 98; **Kelly J. N. D.** Early Christian Doctrines, San-Francisco, 2000, p. 291 և այլն:

[2] **Эриксон М.** Христианское богословие, с. 608: Հմմտ.՝ **Kelly J. N. D.** Early Christian Doctrines, p. 291.

կու՝ աստվածային և մարդկային մտքով: Ցանկացած միտք իր էությամբ ուրույն է, կարող է տարբեր ազդեցություն ունենալ հոգու վրա: Մյուս կողմից՝ ինչպես կարող է Քրիստոսի մեջ առկա լինել մարդկայինը երկու մտքերի դեպքում, երբ նրանցից յուրաքանչյուրը ունի իր նպատակաուղղվածությունը: Մեկ դեմքի մեջ երկու մտքերի առկայությունը միայն կխախտի այդ անձի «իրական միակությունը»: Դա նույնքան անհնար է, որքան երկու մարմնի առկայությունը մեկ տարածության մեջ: Ուստի այդ պարագայում իրական անձնավորումը երբեք հնարավոր չէ, քանի որ մենք կառնչվենք երկու՝ աստվածային և մարդկային մտքերի հակադրության հետ:

Եթե կատարյալ Աստված միավորվեր կատարյալ մարդկային մարմնին, ապա կստացվեր երկու Որդի՝ Որդի աստվածային բնությամբ (Որդի Աստված) և Որդի՝ որդեգրությամբ (Աստվածամարդ): Այդ պարագայում, անխուսափելիորեն, կստացվեր Քրիստոսի երկու բնություն: Այսինքն՝ Որդի Աստծո աստվածային բնության անունով մարդիկ կխաչակնքվեին, իսկ մյուս՝ մարդկային բնության անունով՝ ոչ: Այդ պարագայում քրիստոնեական հավատքը, անխուսափելիորեն, կհանգի կռապաշտության:

Եթե Քրիստոսի մեջ տարանջատվեն երկու բնությունները, ապա Ս. Երրորդության փոխարեն մենք կունենանք չորրորդություն, իսկ դրանից հետևում է, որ Քրիստոսի մեջ երկու կատարյալ բնություններից մեկը չի կարող իրական և ամբողջական լինել[1]:

Աստվածաբանական այդ ելակետային դրույթները Ապոլինարիոսին հանգեցրեցին այն հետևությանը, որ Հիսուս Քրիստոսի մեջ Աստվածային Ոգու (Լոգոսի) առկայությունը անիրական է դարձնում Աստվածային էության և մարդկային տրիխոտոմ մարմնի իրական անձնավորումը: Ապոլինարն անհեթեթ է համարել Հիսուսի մեջ առկա ամբողջական երկու բնությունների առկայությունը, քանի որ «Եթե Հիսուսն ունենար ամբողջական երկու բնություն, ապա պետք է ունենար նաև և՛ մարդկային νούζ (հոգի, միտք, դատողություն)» և՛ աստվածային νούζ՝: Ինչ վերաբերում է մարդկային էության մեկ այլ բաղադրիչին՝ մարդկային ոգուն

[1] Այդ մասին տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Т. 4, с. 142; **Карташев А. В.** Вселенские Соборы, с. 189-190; Williston Walker, A History of the Christian Church, p. 166-167; Hans Lietzmann, A History of the Early Church, v. 2, Cambridge, 1953, pp. 841, 848, 903, 915, 917.

(մտքին), ապա դրա փոխարեն Ապոլինարը Քրիստոսին միայն «անիմալ հոգի» է վերագրել, որով «Քրիստոսի անձում ոչնչացրել է մարդկային անհատականությունը»[1], այսինքն՝ մարդկային «ոգին» (այլ կերպ՝ միտքը)» փոխարինել է Աստվածային Բանով»[2]:

Փորձելով հիմնավորել ուղղափառ քրիստոսաբանությանը հակադրվող այդ տեսակետը՝ Ապոլինարիոսը առաջ քաշեց «փաստարկների» մի ողջ համակարգ, որոնք ուղղակի շաղկապվում էին փրկագործության (սոտերոլոգիա) վարդապետության հետ: Այսպես, նա համարում էր, որ.

1. անձնավորման միակ նպատակը մեղքի ոչնչացումն ու մահվան դեմ հաղթանակն է: Իսկ դա կարող էր իրականանալ միայն այն դեպքում, երբ խաչափայտի վրա «Աստված մահանար ինչպես մահկանացու»: Բայց, եզրակացնում էր նա, եթե ընդունենք, որ Քրիստոսն ունի կատարյալ ու ամբողջական երկու բնություն, ապա դրանից անխուսափելիորեն կհետևի, որ խաչափայտի վրա չարչարվեց և մահացավ աստվածայինի հետ ոչ մի հարաբերություն չունեցող մարդը: Իսկ մարդու, անգամ ամենակատարյալ մարդու մահը, ինչ խոսք, չէր կարող համընդհանուր քավության նշանակություն ունենալ:
2. Քրիստոսի մեջ կատարյալ մարդկայինի առկայությունը, անխուսափելիորեն, ենթադրում է նաև մեղքի առկայություն, քանի որ «մեղքի խմորը մարդու հոգու մեջ է»: Իսկ ինքնուրույնությունից զուրկ մարդկային միտքը որոշվում է այլ չափութաձևերով: Որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեղքն ու մեղսագործությունը, պետք է ունենալ «մարդկային հոգու մեղսալի պահանջմունքներից» լիովին ազատագրված «ամենազոր միտք»[6]:

Ապոլինարիոսյան աստվածաբանական համակարգում հանգամանո-

---

[1] Տե՛ս **Лебедев А. П.,** Вселенские Соборы IV и V веков (Обзор их догматической деятельности въ связи с направлениями школ александриийской и антиохийской), с. 85-86.

[2] Տե՛ս **Карташев А. В.** Вселенские Соборы, с. 196.

[6] Այդ մասին տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Т. 4, с. 142-143; **Карташев А. В.,** Вселенские Соборы, с. 189-190; Христианство (энцикл. словарь), Т. 1, Москва, 1993, с. 107; Encyclopedia of Religion and Ethics (ed. by James Hastings), v. 2, New York, 1964, p. 606-607; Hans Lietzmann, A History of the Early Church, v. 2, pp. 841, 848, 903, 915, 917; J. W. C. Wand, A History of the early church, Norwich, 1963, p. 188-189.

րեն քննարկվում են «ամենազոր մտքի» հասնելու ճանապարհները և ցույց է տրվում, որ մարդկային տրիխոտոմ կառուցվածքը գործնականում անհնարին է դարձնում իրական անձնավորումը, քանի որ.

ա. անհնարին է հաղթահարել մարդկային արատավոր միտքը նրա «ինքնորոշման» ճանապարհով, քանի որ արդյունքում կստացվեր այն, որ Արարիչ Աստված կվերածվեր իր իսկ արարած մարդկային մտքի կործանող ուժի,

բ. մյուս կողմից, անհնար և անիրականանալի է մարդկային միտքը բարձրացնել աստվածային մտքի մակարդակի: Այլապես, Աստվածային Բանի կողքին ի հայտ կգար ինչ-որ «աստվածային միտք», որի հետևանքով Աստվածային Ս. Երրորդությունը կվերածվեր «անորոշ ու անդեմ չորրորդության»[1]:

Այս ամենից կարելի է հետևեցնել Ապոլինարիոսի աստվածաբանության կարևորագույն եզրահանգումներից մեկը՝ անձնավորումից հետո Հիսուս Քրիստոսի մեջ երկու՝ մարդկային և աստվածային բնությունները միավորվում են մեկ անձի մեջ (այդ պատճառով էլ քաղկեդոնականները Ապոլինարիոսին համարում են «միաբնակության հիմնադիր», «միաբնակության հայր» և այլն): Ցավոք, այդ եզրահանգման մեկնության շրջանակներում Ապոլինարիոսը լրիվ շեղում է կատարում ուղղադավանությունից և հանգում է արատավոր այն հետևությանը, թե անձնավորման ժամանակ Հիսուս Քրիստոսի աստվածային բնությունը ամբողջովին չի կարող միանալ մարդկային բնության հետ, այսինքն՝ երկու կատարյալ բնություններ չեն կարող վերածվել մեկի: Աստվածաբանը դա փորձում է բացատրել այս կերպ՝ կատարյալ մարդը լի է բազմաթիվ մեղքերով, իսկ Քրիստոս չի կարող մեղսունակ լինել: Ուստի, եզրակացնում է նա, Հիսուս Քրիստոսը անձնավորվելով՝ հանդես է գալիս իբրև մեկ կատարյալ բնություն:

Բայց, քանի որ «մարդկային բնության օրենքները» ժամանակավոր

---

[1] Այդ մասին տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Т. 4, с. 142-143; **Карташев А. В.,** Вселенские Соборы, с. 189-190; Христианство (энцикл. словарь), Т. 1, с. 107; Encyclopedia of Religion and Ethics, (ed. by James Hastings), v. 2, p. 606-607; Hans Lietzmann, A History of the early church, v. 2, p. 841, 848, 903, 915, 917; J.W.C. Wand, A History of the Early Church, p. 188-189.

են, փոփոխական ու մեղսալից, նրա որակներից ոչ մեկը չի կարող բնութագրել Քրիստոսի անձը, եզրակացնում է Ապոլինարիոսը: Եվ քանի որ Լոգոսը և Հիսուսը (որը անձնավորվելուց հետո կատարյալ մարդ էր) իրապես մեկ են, ապա Հիսուս Քրիստոսը չի կարող կազմվել երկու առանձին անձերից, այլ՝ աստվածայինը և մարդկայինը միավորվում են մեկ անձի մեջ:

Թեև Ապոլինարիոսը ընդունում էր Հիսուս Քրիստոսի անձնավորումը, բայց մարդու մեջ հոգու, ոգու և մարմնի մեկնաբանման պլատոնական տրիխոտոմիայի դիրքերից պնդում էր, որ Քրիստոսի մեջ մարդկային միտքը փոխարինվում է Աստված Լոգոսով: Իսկ դրանից հետևում է, որ Ապոլինարիոսի վարդապետության համաձայն՝ Քրիստոսն ունի մարդկային կատարյալ մարմին և հոգի, բայց՝ Աստվածային (ոչ մարդկային) միտք: Հետևաբար, թեև նա կատարյալ մարդկային մարմին էր առել, այնուամենայնիվ, նրա հոգին ոչ թե մարդկային էր, այլ՝ աստվածային:

Այդ ամենից անխուսափելիորեն հետևում է Ապոլինարիոսի քրիստոսաբանական գլխավոր եզրահանգումը, որը աստվածաբանը բանաձևում է հետևյալ կերպ՝ Հիսուս Քրիստոս հանդես է գալիս իբրև Աստծո և մարդու օրգանական միություն: Անձնավորված Քրիստոսը ունի μια φυσις, μια υποστασις, μια ενεργεια, εν προσωπον, ολος Θεος, ολος ανθρωπος, αυτος ολος Θεος (մեկ բնություն, մեկ անձ, մեկ ներգործություն, մեկ դեմք, կատարյալ Աստված է, կատարյալ մարդ, հենց ինքը՝ կատարյալ Աստված): Այդ իսկ պատճառով էլ նա անհնարին է համարում Քրիստոսին վերագրել երկու դեմք և երկու բնություն[1]:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ միանգամայն հիմնավոր դիրքերից եկեղեցագիտության մեջ տիրապետող տեսակետը պնդում է, թե ապոլինարիական քրիստոսաբանությունը հակադրվում է ուղղադավանությանը: Այդ եզրահանգումը փաստարկվում է նաև նրանով, որ ուղղադավան քրիստոսաբանության համաձայն, իրական քավությու-

---

[1] Այդ մասին տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Ձ. 4, с. 144; Williston Walker, A History of the Christian Church, p. 181, 192, 196; J. W. C. Wand, The Four Great Heresies, p. 72-77; W. H. C. Frend, The Early Church (From the beginnings to 461), London, 1986, pp. 212-213:

նը կարող է իրականանալ միայն Քրիստոսի իրական անձնավորման հետևանքով: Իսկ Ապոլինարիոսը մարդու եռամաս կառուցվածքի (հոգի, ոգի, մարմին) պատճառով իրական անձնավորումը անհնարին է համարում: Ահա այդ ելակետից էլ անխուսափելիորեն բխում են ապոլինարիական վարդապետությունը բնորոշող հետևյալ հիմնական եզրահանգումները՝

ա. Անհնարին է երկու սուբստանցից՝ Լոգոսից և մարդուց, ստանալ կատարյալ մեկ անձ: Դա բացատրվում է նրանով, որ Ապոլինարիոսը Լոգոսի բնությունը բնութագրելով իբրև կենսատու և կենդանի անձ, պնդում է, որ Լոգոսն է միակ ենթական ու միակ իրական անձը: Անձնավորված Աստված-Լոգոսը հանդես է գալիս մեկ բնությամբ, մեկ (աստվածային) մտքով և, հետևաբար, մեկ ներգործությամբ: Քրիստոսի մեջ երկու բնության առկայությունը անխուսափելիորեն կհանգեցներ երկու ներգործության:

բ. Անձնավորված Հիսուս Քրիստոսի մեջ ինքնուրույն երկու բնությունների առկայության դեպքում անխուսափելիորեն կստացվեր երկու Որդի (Աստծու Որդի և մարդու Որդի) և իրական աստվածամարդու փոխարեն գործ կունենանք կենտավրոս-աստված+մարդու հետ:

գ. Անձնավորված Հիսուս Քրիստոսի մեջ միմյանցից անկախ երկու բնությունների առկայության դեպքում կստացվեր ոչ թե Ս. Երրորդություն, այլ՝ չորրորդություն:

դ. Չէր կարող լինել իրական քավություն, քանի որ ապոլինարիական քրիստոսաբանությունից անխուսափելիորեն բխում է խաչափայտի վրա իրական Աստծո մահվան անհեթեթ տեսակետը[1]:

Եվ չնայած այն բանին, որ ուղղադավան քրիստոսաբանության համաձայն «Եւ մարդն է կոչւում Քրիստոս, ե'ւ Աստուած է կոչւում Քրիստոս, ե'ւ Աստուած, ե'ւ մարդ է Քրիստոս, ե'ւ մի է Քրիստոս» (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.)[2], Ապոլինարիոսը մինչև վերջ հավատարիմ մնաց իր խճողված վարդապետությանը: Նրա համոզմամբ, թեև Քրիստոսը իրական մարմին և հոգի առավ, բայց նա այդպես էլ մարդկային միտք չունեցավ: Ուստի, Քրիստոսը երկդեմ չէ, այլ, վերջին հաշվով, Աստծո Բանի անձնավորումն է:

---

[1] Տե՛ս **Карташев А. В.** Вселенские Соборы, с. 190.

[2] Տե'ս Գանձասար, Զ, Երևան, 1996, էջ 22-23; Ps. Athanasis, Contra Apoll., PG 26, 1116 B.

Այս վարդապետության հիմնադիրը չի նկատում նաև, որ անձնավորման սեփական կոնցեպցիայի համաձայն, աստվածայինը ինքն է վերածվում մարդկայինի, իսկ մարդկայինը դառնում է աստվածային: Այն դեպքում, երբ ուղղադավան քրիստոսաբանության համաձայն անձնավորված Քրիստոսի մեջ աստվածայինը և մարդկայինը կազմում են անխառն և անշփոթ մի բնություն, որոնք առկայում են միմյանց կողքին, երբեք չեն խառնվում միմյանց և չեն վերածվում մեկը մյուսին: Միայն այդ որակով Քրիստոսն է հանդես գալիս մի բնությամբ, իբրև աստվածայինի ու մարդկայինի ամբողջական ու կատարյալ անձնավորում, քանի որ Քրիստոսը կատարյալ ու համագոյ Աստված է հար և նման Հորը և Ս. Հոգուն, ինչպես նաև կատարյալ մարմին է՝ հար և նման մարդուն և գոյակից նրան[1]:

Ուղղադավան աստվածաբանությանը արմատապես հակադրվում է նաև Հիսուս Քրիստոսի չարչարանքների և փրկագործության վերաբերյալ Ապոլինարիոս Լաոդիկեցու վարդապետությունը: Թեև Ապոլինարիոսը ընդունում է, որ «Քրիստոսը տառապել է», բայց այդ արտահայտությունը չի մեկնաբանում իր ուղղադավան նշանակությամբ: Նրա համոզմամբ, թեև Հիսուս Քրիստոս տառապել է ինքնակամ, բայց դա Ապոլինարիոսի կողմից ամենևին էլ անհրաժեշտ չէր համարվում և նա պնդում է, թե տառապանքը Քրիստոսի մարդկային բնության հետևանքն էր, բխում էր իր իսկ էությունից՝ իբրև տառապող մարմնի անձնավորման հետևանք[2]:

Դրանով Ապոլինարիոսը մեկ անգամ ևս փորձ էր կատարում մերժել Քրիստոսի երկու բնությունների վերաբերյալ ուսմունքը, բայց դա կատարում էր Քրիստոսի մարդկային բնության «անլիարժեքության» դիրքերից: Թեև նա Հիսուսին համարում էր Աստվածամարդ, միաժամանակ, միանգամայն անընդունելի կերպով պնդում էր նաև, թե անձնավորման ժամանակ մի դեմքում միավորվում են մեկ աստվածային (Բանը) և երկու մարդկային (մարմին և ոգի) որակներ: Ուստի, ըստ Ապոլինարիոսի, Հիսուս Քրիստոս Աստվածամարդը կատարյալ մարդ չէ, քանի որ նա չունի մարդկային հոգի և միտք: Մարդկային միտքը այնքան «տկար է և վնասված», որ եթե այն անձնավորված Քրիստոսի մեջ տեղ գտներ, ապա նա

---

[1] Տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Т. 4, с. 190:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 145:

երբեք հնարավորություն չէր ունենա պայքարել մեղքի դեմ: Այստեղից էլ Ապոլինարիոսի այն արատավոր եզրահանգումը, թե մեղքի դեմ հաղթանակ տանելու համար մարդկային միտքը պետք է փոխարինվեր միմիայն աստվածային Հոգով[1]:

Ճիշտ է, աստվածաբանն իր տեսակետները «հիմնավորում էր» Ս. Գրքի հավատքային դրույթներով ու փիլիսոփայության միջոցներով, այնուամենայնիվ, կարճ ժամանակում նրա վարդապետությունը ձեռք բերեց բազմաթիվ ազդեցիկ ընդդիմախոսներ: Ու թեև ապոլինարիականության համակարգում զգալի տեղ էր հատկացվել նաև քավության հարցերին, այդ հիմնահարցը ևս նրա լուծումներում աչքի ընկավ իր սահմանափակությամբ ու արատավոր էությամբ և բովանդակում էր հերձվածի բազմաթիվ տարրեր:

Ապոլինարական քրիստոսաբանության հիմքում ընկած է անփոփոխ Աստծու և փոփոխական մարդու մեխանիկական միավորման անտիոքյան ըմբռնման մերժումը: Եվ չնայած այդ ակնհայտ փաստին՝ քաղկեդոնականները «արձանագրելով» «ապոլինարական և ալեքսանդրիական քրիստոսաբանության ծայրահեղությունները», փորձում են ցույց տալ այսպես կոչված «միաբնակ եկեղեցիների» և ապոլինարականության օրգանական կապը:

Հանդես գալով առանձին եկեղեցաբանական դոգմատիկայի դիրքերից, ինչը հղի է սուբյեկտիվ ու կանխակալ մոտեցումներով՝ քաղկեդոնական աստվածաբաններն ու եկեղեցագետները Ապոլինարի քրիստոսաբանությունն արժևորում են որոշակի քաղաքական աստվածաբանության դիրքերից: Եվ հանձին ապոլինարականության առնչվում ենք այն փաստին, որ քրիստոնեությունը Էկզիստենցիալ-գործնական տեսանկյունից հայտնության և բանականության անհակասականությունն ու ներդաշնակությունը հիմնավորելու կարիք է ունեցել[2]: Իսկ «սրբություն» (սակրալ) - աշխարհիկ (պրոֆան) դիխոտոմիան բացարձակ նշանակություն է ձեռք բերել միայն հավատքային հիմնահարցերի շրջանակներում: Եվ այդ տեսանկյունից անհեթեթ է հնչում քաղկեդոնականների այն

---

[1] Տե՛ս **Болотов В. В.,** Лекции по истории древней Церкви, Т. 4, с. 146.

[2] Տե՛ս **Торчинов Е. А.,** Религии мира: Опыт запредельного. Психотехника и трансперсональное состояние. СПб., 2007, с. 81: Հմմտ.՝ **Трубецкой С. Н.,** Учение о логосе в его истории: Философско-историческое исследование. М., 2000, с. 434-435:

«հիմնավորումը», թե «մեկ դեմքում միավորված» Հիսուս Քրիստոսի սուբստանցիոնալ բնություններից յուրաքանչյուրն ինքնագոյ է՝ «այլ է մեկը և այլ՝ մյուսը» սկզբունքով:

Երբ ոմանք արիոսական և ապոլինարական քրիստոսաբանական լուծումների միջև միջնորդավորված զուգահեռներ են արձանագրում, ապա դա ամենևին էլ պայմանավորված չէ միայն եկեղեցու կողմից դատապարտված այդ հեղինակների աշխարհընկալմամբ: Ըստ էության այդ մոտեցումները պայմանավորված են ավելի խորքային՝ անտիոքյան աստվածաբանական դպրոցի ընդհանուր ուղղվածությամբ: Երկրորդ, էական ճշգրտման կարիք ունի նաև այն պնդումը, թե այդ շրջանում եկեղեցին ունեցել է «ավանդական ուղղադավան քրիստոսաբանություն»: Փաստերն աներկբա վկայում են, որ եկեղեցական պատմության այս փուլում ուղղադավան քրիստոսաբանության հիմնադրույթները դեռևս գտնվում էին մշակման փուլում, իսկ աստվածաբանական դպրոցների և անհատների քրիստոսաբանական որոնումները դեռևս շատ թե քիչ ընդհանրական դոգմատիկական համակարգի տեսքով չէին ամբողջացել: Եվ երրորդ, քննարկվող դարաշրջանում քրիստոսաբանական լուծումների հակասականության խորքային պատճառներն անհրաժեշտաբար պետք է փնտրել նաև հելլենիզմ-քրիստոնեություն փոխհարաբերության համատեքստում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս շրջանում եկեղեցական ավանդությունն աստիճանաբար ամբողջական տեսք էր ստանում ներքին՝ դոգմատիկական վիճաբանությունների ճանապարհով: Դա բավականին տևական և շարունակական գործընթաց էր, որը մի կողմից ուղեկցվում էր աստվածաբանական հիմնահարցերի փիլիսոփայական քննարկման և լուծման, իսկ մյուս կողմից ապահելլենականացման ճանապարհով[1]:

Ապոլինարի աստվածաբանական համակարգի անկյունաքարը կարելի է համարել փրկագործության մասին նրա ուսմունքը, որը մեկ քայլ ավելին էր, քան ժամանակի այլ եկեղեցական գաղափարախոսություններում ամրագրված փրկագործության ուսմունքները: Կարելի է վստահությամբ պնդել, որ նույնիսկ ուղղադավան եկեղեցին չէր հասցրել վերջնական տեսքի բերել փրկագործության վարդապետությունը: Անձնավորման վարդապետությունն ընկալելով և մեկնաբանելով Քրիստոսի ավե-

[1] Այդ մոտեցման մանրամասները տե՛ս **Гарнак А.** Сущность христианства, с. 96-99:

տարանական պատմության հիման վրա՝ Ապոլինարը հանգել է բավականին գնահատելի այն հետևությանը, որ Քրիստոսը մարդկությանը փրկագործում է «Աստվածամարդկային միությամբ»: «Աստվածամարդկային միացյալ բնություն» քրիստոսաբանական եզրը լավագույն ելակետ է ուղղադավան վարդապետություն ձևավորելու համար: Սակայն նա մինչև վերջ չի ձևակերպել իր պատկերացումները Քրիստոսի աստվածամարդկային բնության վերաբերյալ, քանի որ պնդում է, թե Քրիստոսի աստվածամարդկային անձը ոչ թե իրական, այլ միայն «միջնորդավորված» միություն է: Համաձայն Ապոլինարի ուսմունքի այդ միության մեջ «մարդեղությունն ակտիվանում է աստվածության միջոցով»: Այլ կերպ ասած՝ նա տուրք է տալիս «հատկանիշների փոխանակման» վերաբերյալ հետագայում մեծ տարածում ստացած այս մոտեցմանը և պնդում, որ Քրիստոսի խաչելությունը համընդհանուր քավչարար նշանակություն կարող է ունենալ միմիայն այն դեպքում, երբ «մարդկային գոյն» ուղղորդվի աստվածային կամքով[1]:

Շարունակելով «հատկանիշների փոխանակման» վերաբերյալ վարդապետությունը՝ Ապոլինարը պնդում է, որ անձնավորումից հետո Հիսուս Քրիստոսի մեջ մարդկային և աստվածային բնությունները միավորվում են մեկ անձի մեջ: Իսկ մարդկային անկատար բնությունն իր հերթին անկատար է դարձնում ինքնին անձնավորումը, որը հղի էր երևութայան վարդապետությանը տուրք տալու տարրերով: Այս տեսանկյունից Ա. Հառնակը գրում է, որ Ապոլինարը Քրիստոսի անձից «... դուրս հանեց nus-ը, ինչպես որ այդ հավատացյալ հույներն արդեն կատարել էին նրանից առաջ և հետո, բայց Ապոլինարը դա կատարեց բացահայտ և վճռական ձևով»[2]:

Բավականին տևական շրջան քաղկեդոնական աստվածաբաններն ու գործիչները փորձել են ապոլինարականությունը ներկայացնել հակաքաղկեդոնականության կամ միաբնակության լույսի ներքո՝ պնդելով, որ

---

[1] Տե՛ս **Lietzmann H**. Apollinaris von Laodicea und seine Schule: Texte und Untersuchungen, p. 41, 42-43: Հմմտ.՝ **Մեսրոպ քհն. Արամեան**, Երեք Տիեզերական ժողովների դաւանութիւնը, էջ 126-127, **Ալոյս Գիրլմայեր**, Քաղկեդոնի ժողովը. ընդհարման մի վերլուծութիւն // **«Գանձասար», Զ**, Երևան, 1996, էջ 26-27, **Loofs Fr**. Nestorius and his place in the history of Christian doctrine, p. 45-46:

[2] **Гарнак А.,** История догматов. Ч. II, Развитие церковной догмы, с. 301.

Ապոլինարի «մի բնությունը» դա լիովին համապատասխանում է միաբնակների «մի բնությանը»: Այս ճանապարհով քաղկեդոնականները հող էին նախապատրաստում արևելյան ուղղափառ եկեղեցիներին դոգմատիկ հետերոդոքսիայի մեջ մեղադրելու համար: Առավել ևս անհեթեթ է այն ենթադրությունը, թե իբր Քաղկեդոնի ժողովից հետո «... միաբնակներն Ապոլինարի ստեղծագործությունները տարածեցին ժողովրդի շրջանում, դրանք ներկայացնելով որպես ս. հայրերի ստեղծագործություններ և դա կատարեցին հատկապես պարզունակ մտքերն իրենց կողմը գրավելու համար»[1]: Նման մոտեցումն իր մեջ կանխակալության ընդգծված տարրեր է պարունակում, քանի որ «աստվածային Բանի մեկ բնությունը» ապոլինարականության ու հակաքակեդոնական վարդապետության մեջ օգտագործվում է տրամագծորեն հակառակ դիրքերից: Հակաքաղկեդոնական քրիստոսաբանությունը Քրիստոսի աստվածամարդկային անձում ընդունում է կատարյալ աստվածայինի և կատարյալ մարդկայինի անխառն, անշփոթ, անայլայլելի և անբաժանելի միությունը:

Ապոլինար Լաոդիկեցու աստվածաբանական հայացքները քննադատության են ենթարկվել երկու առաջատար դպրոցների՝ Ալեքսանդրիայի ու Անտիոքի ներկայացուցիչների կողմից: Ալեքսանդրյան դպրոցի պարագան առավել դժվար էր, քանի որ Ապոլինարը ներկայացնում էր հենց այդ դպրոցը և մեծ ջանքեր էր գործադրել ալեքսանդրյան աստվածաբանության հաղթարշավի գործում, մասնավորապես արիոսականների հետ կապված հարցերում: Նրա քննադատությամբ աչքի ընկավ հատկապես Աթանաս Ալեքսանդրացին և կապադովկյան հայրերը, իսկ Հռոմի 377 թ. ժողովը[2] և Կոստանդնուպոլսի 381 թ. տիեզերաժողովը[1] համակարգային

---

[1] **Спасский А. А.,** Историческая судьба сочинений Аполлинария Лаодикийского, с кратким предварительным очерком его жизни, Сергиев Посад, 1914, p. 103. Այս հարցում համահունչ են նաև այլ հեղինակներ, տե՛ս **Hefele K.-J.** Conciliengeschichte. Freiburg, 1873, Bd. I, S. 648; **Sacrorum conciliorum nova amplissima collectio** (ed. by J.-D. Mansi). 1692-1769, T. IV (anni 410-431), p. 482 և այլն:

[2] Տե՛ս **Созомен Эрмий Саламинский.** Церковная История, кн. VI, гл. 25, с. 428: Տե՛ս նաև **Harnack A.** Dogmengeschichte (Grundriss der theologischen Wissenschaften), S. 218; **Hefele K.-J.** Conciliengeschichte. Bd. I, S. 649; **Sacrorum conciliorum nova amplissima collectio** (ed. by J.-D. Mansi). T. V (anni 431-441), p. 461.

քննադատության հասցրեցին Ապոլինարի դատապարտումը:

Անտիոքյան աստվածաբանական դպրոցի համար Ապոլինարի քննադատությունը ևս մեկ առիթ էր ալեքսանդրյան աստվածաբանական ավանդույթներին հարված հասցնելու համար: Չնայած այն հանգամանքին, որ ալեքսանդրացիները դատապարտել էին Ապոլինարին, սակայն դա չէր խանգարում անտիոքյան դպրոցի ներկայացուցիչներին Ապոլինարի վարդապետության քննադատությունը ներկայացնել որպես ալեքսանդրյան դպրոցի ուսմունքի քննադատություն: Անտիոքացիներն Ապոլինարի քննդատությունն իրականացնում էին առաջին հերթին Քրիստոսի բնությունների տարանջատման դիրքերից, ի տարբերություն ալեքսանդրացիների, որոնց համար առաջնային նշանակություն ունեին անձնավորման ու փրկչաբանական հարցերը: Քրիստոսաբանական վիճաբանությունների հետագա պատմությունը ևս ցույց տվեց, որ անտիոքացիներին հետաքրքրում էր Քրիստոսի մարդկային ու աստվածային բնությունների միավորման հարցը, որի շրջանակներում էլ նրանք յուրահատուկ ուսմունքների շարք ստեղծեցին:

Այս ամենով հանդերձ պետք է նշենք, որ Ապոլինար Լաոդիկեցին ու նրա ուրույն աստվածաբանական լուծումները նոր դարաշրջան են բացում քրիստոնեական եկեղեցու համար: Նրա հայացքները մի կողմից խթան հանդիսացան նորովի արժևորելու քրիստոնեական վարդապետության առանցքը կազմող փրկչաբանական-անձնավորման հարցերը, իսկ մյուս կողմից առիթ դարձան Քրիստոսի բնությունների միավորման հարցի շուրջ առավել համակարգային ու ամբողջական պատկերացումներ ձևավորելու համար: Առանց վարանելու կարող ենք պնդել, որ Ապոլինարի ռացիոնալ հարցադրումները, մարդկային ու աստվածային բնությունների միավորման հետ կապված նրա յուրօրինակ լուծումները, դասական փիլիսոփայության ավանդույթների լավ իմացությունն ու գործածությունն այս հարցերում հիմք դարձան հետագա դարաշրջաններում քրիստոսաբանական հարցի առավել ծավալման ու առավել համակարգային լուծումներ գտնելու համար:

---

[1] Կ.Պոլսի 381 թ. տիեզերական ժողովի առաջին կանոնով դատապարտման է ենթարկվել ապոլինարականությունը՝ այլ հերձվածների հետ համատեղ: **Деяния Вселенских Соборов.** Казань, 1872, Т. I, с. 116:

## ԱՊՈԼԻՆԱՐԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***Հովհաննես Հովհաննիսյան***

***Բանալի բառեր:*** *Ապոլինար Լաոդիկեցի, Ալեքսանդրյան դպրոց, աստվածաբանություն, քրիստոսաբանություն, Լոգոս, աստվածամարդ, բնություն*

Հեղինակը վերլուծում է Ալեքսանդրյան հայտնի աստվածաբան Ապոլինար Լաոդիկեցու աստվածաբանությունը, ով դատապարտվել է ընդհանուր եկեղեցու կողմից Քրիստոսի բնությունների միավորման մասին իր մոտեցման համար: Ապոլինարի գաղափարները նպաստեցին փրկչաբանական խնդիրների ձևավորմանը, որոնք հանգեցրին Քրիստոսի բնությունների միավորման վերաբերյալ վերջնական վարդապետության ձևավորմանը:

Հոդվածը հանգում է այն եզրահանգմանը, որ Ապոլինարի ռացիոնալ մոտեցումները, դասական փիլիսոփայության մասին նրա գիտելիքները նպաստեցին քրիստոսաբանական այս բանավեճի համար լավագույն բարդ լուծումների որոնման հարցում:

Թեև Ապոլինարի գաղափարները համարվում էին հերետիկոսական, անհնար է չընդունել նրա կարևոր դերը եկեղեցու աստվածաբանության զարգացման պատմության մեջ:

## О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ АПОЛЛИНАРСКОЙ ТЕОЛОГИИ

***Оганнес Оганнисян***

***Ключевые слова:*** *Аполлинарий Лаодикийский, Александрийская школа, Теология, Христиология, Логос, Богочеловек, Физис*

Автор анализирует теоретические концепции александрийского знаменитого богослова Аполинария из Лаодикии, который был осужден вселенной церковью за его подход к единству природы во Христе. Идеи Аполлинара способствовали развитию сотерологических вопросов, которые привели к формированию окончательной доктрины о единстве природы во Христе.

Статья приходит к выводу, что рациональные подходы Аполлинария, его знание классической философии способствовали инициативе найти наилучшие комплексные решения для христологических дебатов.

Хотя идеи Аполлинара считались еретическими, невозможно не признать его важную роль в истории богословского развития Церкви.

## ABOUT SOME PECULIARITIES OF APOLLINARIAN THEOLOGY

***Hovhannes Hovhannisyan***

***Key words:*** *Apollinarius of Laodicea, Alexandrian School, Theology, Christology, Logos, Theoanthropos, Physis*

The author analyzes the theorlogical conecpts of Alexandrian famous theologian Apolinarius from Laodicia who was condemned by general Church for his approach on the unity of natures in Christ. The ideas of Apollinarus promoted the development of soterological issues which brought to the formation of the final doctrine on the unity of naturies in Christ.

The article comes to the conlcusion that rational approaches of Apollinarius, his knowledge of classical philosophy promoted the initiative to find the best complex solutions for the Christological debate.

Though the ideas of Apollinarus were considered as hereticla, it is impossible not to recognize his important role in the history of theological development of the Church.